Արձանագրություն թիվ 1

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

28 օգոստոսի 2015թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքումյան

Ներկա էին խորհրդի բոլոր 13 անդամները:

Օրակարգ

1. Խորհրդի 2015-2016 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
2. 2015-16թթ. ուս. տարվա I կիսամյակի դասացուցակների քննարկում և հաստատում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
3. 2015-2016թթ.ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակեպման նախապատրաստական աշխատանքների քննարկում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան /

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:Նա սկզբից ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նորացված կազմը,որն ընդգրկում է ֆակուլտետի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական առաջատար կազմին, ուսանողական կառույցների:Ղեկավարներին և ավագներին այնուհետև մանրամասն ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի 2015-16 թթ. ուստարվա

աշխատանքային պլանը և նշեց, որ վերջինս բխում է մասնաճյուղի ռազմավարական պլանից: Այն ընդգրկում է բակալավրի I,II,III և IV կուրսի ուսումնական պրոցեսների բոլոր գործընթացները:Ֆակուլտետի խորհուրդը գումարվում է ամենամսյա պարբերականությամբ, հարկ եղած դեպքում նաև արտահերթ:

Քննարկումից հետո եղավ ընդհանուր առաջարկ հաստատելու խորհրդի 2015-16թթ. ուստարվա աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2015-16թթ. ուստարվա ֆակուլտետի խորհրդի նոր կազմը և աշխատանքային պլանը:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյան: Նա ներկայացրեց 2015-16թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակներն ըստ կուրսերի և մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է I, II, III և IV կուրսերի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով՝ համաձայն ուսումնական պլանների և անհատական ծանրաբեռնվածության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- <<Գծանկարի,գունանկարի և քանդակի>> ամբիոնի վարիչ Ա. Միրզոյանը: Համակարծիք լինելով ներկայացված դասացուցակին նա առաջարկեց ներկայացնել տնօրինությանը հաստատելու 2015-16 թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

ՈՐՈՇԵՑԻՆ -2015-16թթ.ուստարվա I կիսամյակի դասացուցակը ներկայացնել տնօրենության քննարկման ու հաստատմանը:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը հանդես եկավ ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված ներֆակուլտետային հարցերի վերաբերյալ հանձնարարականներով:

ՈՐՈՇԵՑԻՆ-Գործընթացի իրականանացման վերահսկողությունը դնել ֆակուլտետի դեկանի և քարտուղարի վրա:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Ռ.Մելքումյան